

## ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ԱՇԽԱՐՀԻՑ

«Պ Է Պ Օ Ի» Ե Ր Ե Ս Ն Ա Մ Ե Ա Կ Ը

Մինչև Գաբրիէլ Սունդուկեանցի «Պէտօ» կօմեղիան ոռւսահայոց բեմի վրայ տիրապետում էին շնծու պատմական ողբերգութիւններ. այդ բոլոր «Սամուէլների», «Սանդուխտների» և «Արշակների» միակ արժանիքը այն էր, որ ժողովուրդը առիթ էր ունենում գոնեա բեմից հասկացողութիւն կազմել իր մոռացուած «փառաւոր» անցեալի մասին: Բայց երոպական գրականութեան համը առած երիտասարդութիւնը չէր կարող չը տեսնել այդ «ազգասիրութեան» միակողմանիութիւնը, որի չնորհիւ ոչ մի ուշադրութիւն չէր դարձնուում ներկայի վրայ, այսինքն այն իրական պայմանների վրայ, որոնց մէջ ապրում է այժմ ժողովուրդը:

Բայց մի խումբ երիտասարդ հայ թատերասէրներ նպատակ զրին բեմ հանել ներկայ կեանքը, ուակայն աւելի ծիծաղեցնելու քան լուրջ հասարակական խնդիրներ արձարծելու դիտաւորութեամբ: Այդ երիտասարդներից Միքայէլ Պատկանեան, բժ. Միք. Տէր-Գրիգորեան և Փուղինեան հեղինակեցին մի շարք կօմեղիաներ, վօղըվիներ և զաւեշտներ, ինչպէս «Միջի մարդկամ մօցիքուլ», «Մէկը նշանած միւսը կին», «Պառաւներուն խրատ», «Պէտօի տկճուր», «Նինոյի նշանվիլը», «Խոտորնակին Խոտորնակ» և այլն:

Այդ թարմ հոսանքի չնորհիւ ժողովուրդը աւելի սերտ կապուեց մայրենի բեմին և կուշտ ծիծաղելով հանդերձ տեսաւ բեմ գուրս բերուած նաև իր կեանքի այլանդակ կողմերը: Այդ երիտասարդ թատերապիրների թուին էր պատկանում և Գաբրիէլ Սունդուկեանցը, որի առաջին գրուածքը, «Գիշիրվան սաբրը խէր է», պատկանում է վերև յիշած վօղըվիների շարքին: Բայց Գաբրիէլ Սունդուկեանցի միւս գրուածքների մէջ, «Խաթարալաւ» և «էլի մէկ զոհ», ծիծաղի

հետ արդէն լուռմ էր և մի լուրջ նօտ, հասարակական բարքերի ըննազատութիւն։ Այդ լուրջ նօտը աւելի ուժեղ և գեղարուեստորէն յայտնուեց նրա «Պէպօ» կօմեդիայի մէջ, որ ներկայացրուեց 30 տարի առաջ։

«Պէպօ» առաջին և մինչեւ այժմ՝ միակ ինքնուրոյն հայկական պիէսն է, որ իր գեղարուեստական բէալականութեամբ մի նոր էջ է սկսում հայոց գրականութեան մէջ և իր շօշափած հասարակական հարցով դուրս է գալիս նեղ աղքային շրջանից ու դաւնում համակովկասեան և նոյն իսկ համամարդկային գրականութեան սեփականութիւն։

«Պէպօ» մէջ դուրս է բերուած մի ճնշուած աշխատաւոր, որ բողոքում է իրան հարստահարող փողաւորի դէմ։ Այդ սրտից բլխած մի ճիշ էր յանուն արդարութեան և այդ ճիշը համակրանք զարթեցրեց հասարակութեան մէջ, չը ջոկելով հային վրացուց եւ ոռւսից։ Մի այդպիսի գրուածք չէր կարող շարժում շառաջացնել ոչ միայն հայոց բեմի, այլ և մեր դարեսոր հարևանների գրականութեան մէջ։ «Պէպօ» թարգմանուում է վրայերէն և նրան հետեւլով վրացիներն էլ գրական կեանքից սկսում են կօմեդիաներ գրել. Յագարելին գրում է «Խանումը», «Ճիմբիրելին», հայ գըրողները՝ Գուստավ Քալանթարեանը, Պարունքէգեանը, նոյն թիֆլիսեցոց կեանքից, նոյն բարբառով կօմեդիաներ են գրում («Քաղքի Աղաթ» առաջինի և «Օյինբազ» երկրորդի)։

Այդպէս ահա մեծ էր Գաբրիէլ Սունդուկեանցի գլուխ գործոց «Պէպօ» նշանակութիւնը։ Եթէ այդ գրուածքը չունենար գեղարուեստական մեծ արժանիքներ, նա չէր կարող 30 տարի մնալ բեմի վրայ. մինչդեռ այժմ իսկ նա շարունակում է անկեղծ հրճուանք առաջացնել հանդիսականների մէջ, ինչպէս այդ ցոյց տուին ապրիլի 28-ին, 29-ին և 30-ին տուած ներկայացրումները և նրանց յաջորդող հանդէսները։

Մեր նպատակից դուրս է նկարագրել այդ հանդէսները, որոնց մանրամասնութիւնները յայտնի են ընթերցողներին լըրագիրներից։

Նրան, որ աշխատել էր ժողովրդի համար, որի համակրանքը ժողովրդի զաւակ՝ Պէպօյի կողմն էր, նախ մեծարեց ժողովուրդը։

Շաբաթ, ապրիլի 28-ին, վրաց ժողովրդական թատրոնի սեկցիան, Աւճալեան ժողովրդական թատրոնում, ներկայացրեց «Պէպօ» վրացերէն։ դաշիճը զարդարուած էր գրօշակներով և կանաչեղէնով. առաջին կարգում դրած էր կանաչեղէնով ծածկուած բազկաթոռ՝ մեծ հիւրի համար։ Ժողովուրդը հանդիպեց

իր սիրած դրամատուրգին «վաշա» բացականչութիւններով և նուռագեց կովկասցիներիս զուռնան։ Ներկայացումը սկսուեց և վերջացաւ մեծ աշխոյժով՝ գերակատարները բոլորը թատերասէրներ էիր, սրանց մէջ կայլն և արհեստաւորներ։ Ներկայացումը վերջանալուց յետոյ վարագոյրը նորից բարձրացաւ. բեմը զարդարուած էր, իսկ մէջտեղում դրուած էր ծաղիկներից շինած մի մեծ քնար, որի վրայ գրուած էր «Պէտօ—XXX»։ Քնարի շուրջը խմբուել էին գերակատարները։ Սեկցիայի անդամներից մէկը բացատրեց ժողովրդին Սունդուկեանցի մատուցած ծառայութիւնը թատրոնին և գրականութեանը, այնուհետև բեմ բարձրացաւ ծերունի հեղինակը և չնորհակալութիւն յայտնեց թէ ժողովրդին և թէ խաղացողներին. մեծ հիւրին ճանապարհ գցեցին «վաշա» կանչելով և զուռնայով։

Երկրորդ գիշերը, ապրիլի 29-ին, «Պէտօի» 30-ամեակը տօնեց վրաց դրամատիկական կոմիտէտը ազնուականների թատրոնում։ Թատրոնի դրսի ճակատը զարդարուած էր վինդելով, որի վրայ գրուած էր՝ «Տաղանդաւոր դրամատուրգ Գ. Սունդուկեանցին—1871—1901»։ Թատրոնի ներսը զարդարուած էր զրոշակներով և պատկներով, որոնց մէջն էին Սունդուկեանցի պիէսների անունները։ Խաղացուեց մեծ աշողութեամբ «Պէտօն»։ Մասնակցում էին խմբի լաւագոյն ոյժերը. ներկայացումը վերջանալուց յետոյ կատարուեց հանդէսը. Կարդացած ուղերձներից ուշագրութեան արժանի են երկուսը. Պ. Օպօչինինը, որ պատգամաւոր էր եկած արքունական թատրոնի դիրեկտորից, ասաց «Մեծ պատիւ է ինձ համար, որ վիճակուեց ինձ ոռւս բեմի ներկայացուցչին չնորհաւորել ձեզ՝ հայ գրամատուրգիդ՝ վրաց բեմի վրայ»։ Այնուհետև նկարագրելով պ. Սունդուկեանցի մատուցած ծառայութիւնը հայ-վրաց-ռուս բեմերին, ցանկաց այս երեք ազգութիւնների միութիւնը. «Թէ ն թատրոնը մի կողմից, ասաց պարոնը, իբր ազգային հիմնարկութիւն պահպանում է լեզուն, սակայն միւս կողմից նա տարածում է իդէալներ, որոնք սեփականութիւն են ամբողջ մարդկութեան, և այս ընդհանուր զգացմունքներով միանում են ազգութիւնները. այս տեսակէտից Գ. Սունդուկեանցի տաղանդը հանդիսացաւ շաղկապ հայ-վրաց-ռուս ազգութիւնների մէջ»։

Միւս նշանաւոր ճառը ասաց գերասան Ղիփիանին, որ մասնակցել էր «Պէտօի» վրացերէն առաջին ներկայացման, ինչպէս և այդ օրը. «Վրաց թատրոնը ունեցել է երկու շրջան. առաջինը, սկսուելու օրից հանդէս եկան Գ. էրիսթօվը. Անտօնօվը (գորեցի հայ), որոնք տուին վրաց թատրոնին մի շարք կենսական պի-

էսներ, այսուհետև վրաց թատրոնը քննեց խորը քնով. այդ գըրութեան մէջ էր նա 25 տարի: Այս ժամանակը հանդէս է զալի Գաբրիէլ Սունդուկեանցը. սա կազմում է նոր շրջան—վրաց թատրոնի վերածնութեան շրջանը. այս վերածնութեամբ վրաց թատրոնը պարտական է Սունդուկեանցին: Սա իր տաղանդաւոր երկերով զարթեցրեց հասարակութիւնը և թատրոնը, զարկ տուաւ նոր թատերական գրականութեանը, ունեցաւ հետեղներ վրաց գրողների մէջ, այդ պատճառով էլ Սունդուկեանցը մնձ տեղ է բռնում վրաց թատրոնի և գրականութեան մէջ»:

Երրորդ գիշերը, ապրիլի 30-ին, հայ գերասանական խումբը տօնեց «Պէտիի» 30-ամենակը Թիֆլիսի Արտիստիկական ընկերութեան թատրոնում, ներկայացնելով «Պէպօն», որի գերը կատարում էր պ. Գ. Զմշկեանը, ինչպէս և 30 տարի առաջ, երբ առաջին անգամ ներկայացրուեց այդ հոչակաւոր գրուածքը: Ներկայացումից յետոյ տեղի ունեցաւ չորհաւորական մի սրտաբուղի հանդէս: Յոլորից սիրաւած ու յարգուած եօթանասունուինգ ամենայ ծերունին հազուագիւտ բախտ ունեցաւ. նա ականատես էր իր երկի առաջացրած շարժման. նա տեսաւ թէ ինչ ազնուացնող ազգեցութիւն արեց «Պէպօն»-ում՝ պաշտպանուած գաղափարը ազգերի վրայ, շարժելով նրանց հոգու խորչերում եղբայրական սիրոյ և համերաշխութեան ձգտումները: Ուրեմն կեցցէ ճնշուած Պէպօների շատագովն ու տաղանդաւոր արտայայտիչը. կեցցէ Գաբրիէլ Սունդուկեանց:

Vox.